ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/14

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.01.2019թ. թիվ 26-3/437-19 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 11.01.2018թ. թիվ 02/01.91/73-19 գրության հիման վրա 17.01.2019թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ մշակույթի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ մշակույթի նախարարությունը 11.01.2018թ. թիվ 02/01.91/73-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.04.2018թ. հայտարարված ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ պատվիրատու) և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ կատարող) 31.05.2018թ. ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով կնքվել էր գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), որի շրջանակներում կատարողի կողմից պետք է իրականացվեին ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի, Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք):

Կատարողի առաջարկով պայմանավորված՝ ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 19.10.2018թ. կնքված N 1 համաձայնագրով պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել էր և սահմանվել 19.11.2018թ.:

Կատարողի 15.11.2018թ. N ՍՄ-18/43 և 14.12.2018թ. N ՍՄ-18/50 գրություններով պատվիրատուի ընդունմանը ներկայացված աշխատանքը և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով երկու անգամ՝ 21.11.2018թ. և 14.12.2018թ. ներկայացված պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունները չեն ընդունվել ու մերժվել են պատվիրատուի կողմից՝ ներկայացված աշխատանքի թերի լինելու և ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը չստանալու պատճառով:

Մինչ այդ կատարողի 01.10.2018թ. N ՍՄ-18/37 գրությամբ պատվիրատուի համաձայնեցմանն էին ներկայացվել աշխատանքի էսքիզային նախագծի ճարտարապետական մասը և ելակետային տվյալներ, որոնք կատարողի 15.11.2018թ. N ՍՄ-18/43 գրությամբ ներկայացված աշխատանքի հետ միասին քննարկվել են ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 21.11.2018թ. նիստում՝ կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ: Արդյունքում՝ աշխատանքը համարվել է լրամշակման ենթակա՝ հաշվի առնելով հնչած դիտողությունները և առաջարկությունները:

Կատարողի 14.12.2018թ. N ՍՄ-18/50 գրությամբ ներկայացված լրամշակված աշխատանքին ՀՀ մշակույթի նախարարությունը չի տվել իր համաձայնությունը՝ 26.12.2018թ. N 03/14.1/9299-18 գրությամբ նշելով առարկության հիմքերը:

ՀՀ մշակույթի նախարարության կողմից 25.12.2018թ. պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.2 և 2.1.3 կետերի պահաջները:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով պայմանագրի 7.9-րդ կետը՝ կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը 28.12.2018թ. հրապարակվել է տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Վերոգրյալից ելնելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի հիմքով գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով՝ կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը:»:

ՀՀ մշակույթի նախարարությունը 07.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«1. ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի

մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.04.2018թ. հայտարարված ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ պատվիրատու) և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ կատարող) 31.05.2018թ. ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով կնքվել էր գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), որի շրջանակներում կատարողի կողմից պետք է իրականացվեին ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք): Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ էր սահմանված 20.10.2018թ.:

2. Պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածի համաձայն կատարողի կողմից իրականացվելիք աշխատանքները սահմանված էին N 1 և N 2 աղյուսակներով: Ընդ որում՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի N 1 աղյուսակով սահմանված էին Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները, որոնք հիմք պետք է հանդիսանային N 2 աղյուսակով սահմանված և երկու փուլի բաժանված՝ Գիտանախագծային փաստաթղթերի կազմման 1-ին (էսքիզային) փուլի և Գիտանախագծային փաստաթղթերի կազմման 2-րդ (աշխատանքային գծագրերի մշակման) փուլի աշխատանքների կատարման համար: Մինչդեռ դիրքորոշման մեջ կատարողի կողմից իրականացվելիք աշխատանքները ներկայացված են առանց վերոնշյալ N 1 աղյուսակով սահմանված աշխատանքների:

3. Կատարողի կողմից 02.10.2018թ. (01.10.2018թ. թվագրված N ՍՄ-18/37 գրությամբ) պատվիրատուի համաձայնեցմանն է (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկմանը) ներկայացվել՝ 1.Ելակետային տվյալներ և 2.Նախագծի էսքիզայի ճարտարապետական մասը, որին պատվիրատուի 30.10.2018թ. 02/14.1/7748-18 գրությամբ պատասխանվել է որ. «...փաստաթղթերի համաձայնեցումը երկարաձգվում է, քանի որ նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի կայացման օրը դեռ հայտնի չէ (այն բանավոր Ձեզ կտեղեկացվի):»: Ընդ որում՝ կատարողը տեղյակ լինելով ՀՀ մշակույթի նախարարության

գիտամեթոդական խորհրդի նիստի ուշացման մասին իր 19.10.2018թ. N ՍՄ-18/39 գրությամբ (մինչև պատվիարտուի պատասխան գրությունը ստանալը) խնդրել է երկարաձգել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 30 օրով, հայտնելով նաև, որ ըստ էության նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են:

4. Հաշվի առնելով ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի ուշացման հանգամանքը՝ պատվիրատուն համաձայնվել է պայմանագրով սահմանված աշխատանքի կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և 19.10.2018թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որով պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել և սահմանվել է 19.11.2018թ.:

5. Կատարողի 15.11.2018թ. N ՍՄ-18/43 գրությամբ ներկայացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքը և աշխատանքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), որը քննարկվել է ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 21.11.2018թ. նիստում (4 աշխատանքային օր հետո): ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 21.11.2018թ. կայացած նիստում էսքիզային փուլի գիտանախագծային փաստաթղթերը քննարկվել են կատարողի ներկայացուցիչների ներկայացմամբ և անմիջական մասնակցությամբ: Գիտամեթոդական խորհրդի եզրակացությամբ որոշվել է նախագիծը լրամշակել՝ հաշվի առնելով հնչած դիտողությունները և առաջարկությունները, միաժամանակ անհրաժեշտ համարելով համագործակցել ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների վերականգնման բաժնի (այսուհետ՝ վերականգնման բաժին) հետ: Գիտամեթոդական խորհրդի նիստի օրը կատարողը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացրել է իր կողմից ժամը 17:30-ին ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3), տեղյակ լինելով, որ գիտանախագծային փաստաթղթերը չեն ստացել գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը: Կատարողին ամբողջությամբ պարզ են եղել գիտանախագծային փաստաթղթերի ընդունելի չլինելու խնդիրները, և ավելին՝ կատարողը աշխատանքային կարգով համագործակցել է վերականգնման բաժնի հետ, տեղում ստացել գիտամեթոդական խորհրդի արձանագրության քաղվածքը, որի արդյունքում կատարողի 14.12.2018թ. N ՍՄ-

18/50 գրությամբ պատվիրատուին է ներկայացվել գիտամեթոդական խորհրդում արված առաջարկությունների հիման վրա լրամշակված գիտանախագծային փաստաթղթերի ճարտարապետաշինարարական մասը և աշխատանքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1): Այսինքն կատարողը տեղեկացված է եղել գիտամեթոդական խորհրդում արված առաջարկություններին և պաշտոնապես ավելի ուշ ստանալը հիմք չէր կարող լինել աշխատանքը թերի կատարելու համար:

6. Կատարողի կողմից 14.12.2018թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացված պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը չի ընդունվել ու մերժվել է պատվիրատուի կողմից 19.12.2018թ.՝ ներկայացված աշխատանքի թերի լինելու պատճառով: ՀՀ մշակույթի նախարարությունը կատարողի լրամշակված աշխատանքը ներկայացրել է գիտամեթոդական խորհրդում քննարկման 20.12.2018թ.՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացության դեպքում կատարողը հնարավորություն կունենա թերությունները շտկել, սակայն աշխատանքին գիտամեթոդական խորհրդի կողմից կրկին չի տրվել դրական եզրակացություն և քննարկումը նախատեսվել է հետաձգել: Արդյունքում ՀՀ մշակույթի նախարարությունը 26.12.2018թ. N 03/14.1/9229-18 գրությամբ կատարողին պատասխանել է՝ հայտնելով, որ ներկայացված աշխատանքին չի տալիս իր համաձայնությունը (նշելով հիմքերը):

7. Միաժամանակ կատարողի նկատմամբ պատվիրատուի կողմից երբևէ չի կիրառվել աշխատանքի կատարման ժամկետը խախտելու վերաբերյալ որևէ տույժի միջոց (պայմանագրի 5.3 կետով նախատեսված): Այսինքն պայմանագիրը միակողմանի լուծելու պահանջը չի վերաբերվել կատարողի կողմից ժամկետի ուշացմանը, պահանջը կապված է կատարողի կողմից աշխատանքների ոչ պատշաճ կատարման խնդրի հետ: Կատարողը պարտավոր էր պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ, ինչը չի ապահովվել:

8. Միաժամանակ, պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի վերջին մասում աստղանիշով ընդգծված է, որ «*Աշխատանքները կատարել ... և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված «Պատմության

և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» կարգի պահանջներին համապատասխան:»: Համաձայն նշված կարգի լիազորված մարմնի համաձայնությունը տրվում է գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացության հիման վրա: Ուստի կատարողի կողմից ներկայացված գիտանախագծային փաստաթղթերի կազմման 2-րդ (աշխատանքային գծագրերի մշակման) փուլի աշխատանքը ՀՀ մշակույթի նախարարության կողմից կարող էր համաձայնեցվել միայն գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացության դեպքում կամ 1-ին՝ էսքիզային փուլի փաստաթղթերը համաձայնեցնելուց հետո:

9. Ինչ վերաբերում է ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 20.12.2018թ. տեղի ունեցած նիստի մասնակից Հ. Սանամյանի դիտարկմանը՝ պետք է նկատել, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրի Աղյուսակ N 3-ի 5-րդ կետում նշված է՝ «պեղման հաշվետվություն, ալբոմներ, լուսանկարներ» և «ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում (2018 թ. ընթացքում կատարվող աշխատանքներ)», որի համար դրան նախորդող գիտամեթոդական խորհրդի նիստում նշվել էր, որ աշխատել նույն գործակալության հետ, որով ևս հնարավորություն էր տրված ծանոթանալ առկա նյութին և վերականգնման բաժնի հետ կատորողը աշխատել է և կատարողը օգտվել է նախկին տեղեկատվությունից, ինչպես նաև աշխատել է նախորդ կազմակերպության հետ, ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերում ներառելով 2018թ. կատարված ուսումնասիրությունների տվյալները: Միաժամանակ, 2018թ. ընթացքում իրականացված ուսումնասիրություններին զուգորդող պեղումները կրել են մաքրման աշխատանքների բնույթ, որոնց համար ևս հիմք են հանդիսացել նախկին պեղումները: Ուստի առավել քան կարևոր ենք համարում հաշվի առնել գիտամեթոդական խորհրդի նիստի քննարկման ընթացքում մասնագետների կողմից հնչեցրած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա կատարողի կողմից աշխատանքի թերությունների շտկումը, քան այն հանգամանքը թե ինչը կարող է կատարողի համար օգտագործվել որպես աշխատանքի ընդունմանն օգտակար պատճառ:

Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.2-րդ, 2.1.3-րդ և 7.9-րդ կետերը՝ կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ մշակույթի նախարարության պահանջը պնդում ենք:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ մշակույթի նախարարության լիազորված ներկայացուցիչներ Արմեն Աբրոյանը և Արսեն Սողոմոնյանը:

3. <u>«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 25.01.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«31.05.2018թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և ՀՀ մշակույթի նախարարության միջև 31.05.2018թ. կնքված՝ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիրը ՀՀ մշակույթի նախարարության կողմից 25.12.2018թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.2 կետի և 2.1.3 կետի ուժով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և ՀՀ մշակույթի նախարարության միջև 31.05.2018թ. կնքված՝ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիրը ՀՀ մշակույթի նախարարության կողմից 25.12.2018թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.2 կետի և 2.1.3 կետի ուժով:

Համաձայն պայմանագրի 2.1.2 կետի՝ եթե կատարվել է պայմանագրի հավելված 1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, ապա Պատվիրատուն իրավունք ունի.

ա. չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի հավելված 1-ով սահմանված պահանջներին,

բ. խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Էսքիզը Պատվիրատուի կողմից չքննարկելու և Ընկերությանը եզրակացություն չտրամադրելու մասով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և ՀՀ մշակույթի նախարարության

միջև ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիրը կնքվել է 31.05.2018թ. և վերջնաժամկետ սահմանվել 20.10.2018թ.:

Համաձայն պայմանագրի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, աշխատանքները բաժանվել են երկու փուլի՝

- գիտանախագծային փաստաթղթերի կազմման 1-ին (էսքիզային փուլ),
- գիտանախագծային փաստաթղթերի կազմման 2-րդ (աշխատանքային գծագրերի մշակման փուլ):

Ընդ որում, 1-ին փուլի աշխատանքները, այսինքն էսքիզային աշխատանքները պետք է համաձայնեցվեին ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի հետ և ստանային գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, որից հետո դրա հիման վրա պետք է կատարվեին գիտանախագծային փաստաթղթերի կազմումը:

Հայտնում ենք, որ էսքիզը ներկայացվել է Պատվիրատուին 2018թ. հոկտեմբերի 1-ին:

Մոտ մեկ ամիս զանգահարելով Պատվիրատուին, որպեսզի տեղեկանանք ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի արդյունքների մասին՝ Պատվիրատուն 30.10.2018թ., այսինքն էսքիզը ներկայացնելուց մեկ ամիս հետո, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ուղված գրությամբ հայտնել է, որ ի պատասխան Ձեր կողմից ներկայացրած էսքիզին, հայտնում ենք, որ դեռևս չենք կարող գնահատել, քանի որ գիտամեթոդական խորհրդի նիստը դեռևս տեղի չի ունեցել:

Այնուհետև՝ Պատվիրատուն հաշվի առնելով, որ պայմանագրի կատարման ժամկետը ավարտվում է 20.10.2018թ., իսկ Պատվիրատուն դեռևս չի քննարկել անգամ էսքիզը, 19.10.2018թ. կնքվեց համաձայնագիր, ըստ որի Պայմանագրի վերջնաժամկետ սահմանվեց 19.11.2018թ.:

21.11.2018թ. ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի համաձայն՝ վերջապես տեղի ունեցավ երկար սպասված նիստը (այսինքն կնքված համաձայնագրով սահմանված Պայմանագրի վերջնաժամկետը՝ 19.11.2018թ., ավարտվելուց երկու օր հետո), որի ժամանակ նոր միայն քննարկվել է էսքիզը: Այսինքն աշխատանքների վերջնաժամկետը լրանալուց 2 օր անց, այն է 21.11.2018թ., ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհուրդը նոր միայն նիստ է կայացրել, որի ժամանակ քննարկել է

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած պայմանագրով նախատեսված աշխատանքների առաջին փուլի փաստաթուղթը՝ էսքիզը:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ անգամ այս ուշացումների պայմաններում ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի արձանագրությունը և քաղվածքը չներկայացվեցին «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին, որպեսզի Ընկերության համար պարզ լիներ, թե Պատվիրատուի համար էսքիզը ընդունելի է, թե՝ ոչ, և եթե ընդունելի չէ, ապա ինչ մասերով և ինչ հիմնավորմամբ:

ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի արձանագրության քաղվածքը «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ներկայացվել է միայն 26.12.2018թ.՝ Ընկերությանը ուղղված համապատասխան գրությամբ:

Նման պայմաններում անհասկանալի է, թե «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն ինչպես պետք է ժամանակին և պատշաճորեն կազմեր աշխատանքի 2-րդ փուլի փաթեթը՝ կատարեր աշխատանքային գծագրերի մշակում, եթե չէր ստացել որևէ դիրքորոշում ներկայացված էսքիզի վերաբերյալ:

Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը խախտումով չստորագրելու և առանց բացասական եզրակացության Ընկերությանը հետ ուղարկելու մասով:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ

որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին տեղեկացնում ենք, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, տեսնելով, որ Պատվիրատուի կողմից չկա որևէ պատասխան՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն Պատվիրատուին ներկայացված էսքիզի վերաբերյալ, նշված էսքիզի հիման վրա ստիպված կատարում է 2-րդ փուլի աշխատանքները, և 15.11.2018թ. ներկայացնում է էսքիզի հիման վրա մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը, դրանց կցելով թիվ 3.2 հավելվածը՝ ակտ թիվ 1-ը, այսինքն աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

Տեղեկացնում ենք, որ նշված մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերին կից ներկայացվել է նաև լիցենզավորված կազմակերպության՝ «Հաբշին նախագիծ» ՍՊԸ-ի նախագծա-նախահաշվային փորձաքննությունը, որի համաձայն՝ փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

21.11.2018թ. Ընկերությունը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Նշված փաստը հաստատվում է ՀՀ մշակույթի նախարարության գլխավոր քարտուղարի ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ:

Պատվիրատուն 06.12.2018թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Ընկերությանը հետ է վերադարձնում 04.12.2018թ. թվագրված հանձնման-ընդունման արձանագրությունը վերադարձնելու գրությունը, որտեղ առկա է. «Նշումներ անհամապատասխանությունների մասին. գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերը թերի են և չեն ստացել ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն:»:

Նշվածի հետ կապված միաժամանակ առկա են 3 խախտում.

1. Պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը: Մինչդեռ, ինչպես նշվել է, հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուին հանձնվել է 21.11.2018թ., իսկ Պատվիրատուի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Ընկերությանը հետ է վերադարձվել միայն 06.12.2018թ., այսինքն ժամկետի խախտմամբ՝ 11-րդ օրը, և գուցե հենց այս պատճառով է Պատվիրատուն թվագրել նշված փաստաթուղթը 04.12.2018թ.:

2. Պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Տեղեկացնում ենք, որ Ընկերությանը չի

ներկայացվել ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի բացասական եզրակացությունը, ինչի պայմաններում Ընկերությանը առնվազն պարզ կլիներ, թե նախագծային փաստաթղթերում ինչ թերություններ են առկա:

3. Եվ վերջապես, գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ բացասական եզրակացություն է ներկայացրել ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհուրդը, մինչդեռ ըստ Պայմանագրի տեխնիկական բնութագրի՝ ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի հետ պետք է համաձայնացվեր բացառապես էսքիզը, այլ ոչ թե նաև 2-րդ փուլի փաստաթղթերը:

Բանավոր քննարկումների արդյունքում փորձելով հասկանալ, թե ինչ թերություններ են առկա կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերում և կատարելով որոշակի շտկումներ, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 14.12.2018թ. ՀՀ մշակույթի նախարարություն կրկին մուտք է անում վերամշակված փաստաթղթերը:

Նույն օրը Ընկերությունը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

Պատվիրատուն 19.12.2018թ. էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Ընկերությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը՝ նորից չկցելով բացասական եզրակացությունը, որը հիմք է հանդիսացել պայմանագրի արդյունքը չընդունելու համար, ինչպես դա պահանջում է Պայմանագրի 3.3 կետը:

Հայտնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և ՀՀ մշակույթի նախարարության միջև 31.05.2018թ. կնքված ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով պայմանագիրը ՀՀ մշակույթի նախարարության կողմից միակողմանի լուծվել է 25.12.2018թ.:

Տեղեկացնում ենք նաև, որ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ դիտողությունները (այսինքն բացասական եզրակացությունը), ինչպես նաև ներկայացված էսքիզի վերաբերյալ ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի արձանագրության քաղվածքը «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացվել է միայն 26.12.2018թ.՝ ՀՀ մշակույթի նախարարության Ընկերությանը ուղղված թիվ 03/14.1/9299-18 գրությամբ, այսինքն պայմանագիրը լուծելուց հետո:

Արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման և թույլ տված անգործության հետևանքով այսօր «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:

Ի լրումն 01.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմանը «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 19.01.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«24.12.2018թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն դիմել էր ՀՀ վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Փաշինյանին և ՀՀ մշակույթի նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Մակունցին, որով մասնավորապես նշել էր.

«Օրերս լայն քննարկման առարկա դարձավ ՀՀ-ում մի քանի նախարարությունների վերակազմավորման, ինչպես նաև ՀՀ կառավարության նիստում մի շարք ԾԻԳ-երի և Գործակալությունների մասին Ձեր հայտնի ելույթը:

Միանշանակ իմ համաձայնությունն եմ հայտնում Ձեր վարած ճիշտ և նպատակակետին ուղղված քաղաքականությանը, քանզի իմ ներկայացրած նամակը վառ օրինակ է Ձեր ասվածի պարոն վարչապետ:

Ներկայացրածս թեման պարզ օրինակ է, թե ինչով են զբաղված ՀՀ մշակույթի նախարարությունում մի շարք աշխատակիցներ, գիտամեթոդական խորհուրդը և Գործակալությունը:

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի համանուն ամրոցի բաղնիքի ամրակայման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերը ներկայացվել են ս.թ. հոկտեմբերի 1-ին էսքիզային տարբերակով և հարկադրաբար նոյեմբերի 15-ին՝ նախագծանախահաշվային փաստաթղթերը փորձաքննությամբ, ստիպված, որովհետև գիտամեթոդական խորհուրդի նիստ չէր հրավիրվում մեզ անհասկանալի պատճառներով և լրանում էր պայմանագրի (ևս 30 օր երկարաձգված) գործողության ժամկետը:

Գտնում եմ, որ մշակույթի նախարարության աշխատակիցների և գիտամեթոդական խորհրդի անգործության շնորհիվ ձգձգվել են մեր աշխատանքները:

Նոյեմբերի 15-ին ներկայացված նամակին պատասխան առ այսօր չի ստացվել: Armeps համակարգով 06.12.2018թ. տրվել է բացասական եզրակացություն գիտամեթոդական խորհրդում որպես թե չանցնելու կամ լրամշակման ուղարկելու պատրվակով: Հայտնում եմ, որ առ այսօր գիտամեթոդական խորհրդի եզրակացություն-որոշումը չենք ստացել:

Մեր այցելությունների ժամանակ մեզ ասել են, որ կան որոշակի թերություններ, նախագիծը լրամշակման կարիք ունի, խնդրում ենք ուղղեք և բերեք (խոսքը Գայանե Նազլուխանյանի և Արմեն Աբրոյանի մասին է):

Դեկտեմբերի 4-ին մեր կողմից նորից ներկայացվել են նախագծային փաստաթղթերը և դրան կից՝

1. Ճարտարապետաշինարարական մաս 4 օրինակ,

2. ԱԿՏ N 1 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ 2 օրինակ:

Դեկտեմբերի 19-ին տրվել է բացասական եզրակացություն և դեկտեմբերի 20-ին նորից բանավոր հրավիրվել ենք գիտամեթոդական խորհրդի նիստի, որի արդյունքների մասին ևս տեղեկություն չունենք:

Այսպես տարօրինակ և չտրամաբանված է աշխատում մշակույթի նախարարությունը իր գիտամեթոդական խորհրդով և նախարարության կազմում գործող գործակալությունը,

Խնդրում եմ Ձեզ տալ համապատասխան ընթացք:»:

Ի պատասխան վերոնշված գրության՝ 24.01.2019թ. ՀՀ մշակույթի նախարարությունից ստացել ենք պատասխան, որին կից ներկայացվել է նաև ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 20.12. 2018թ. տեղի ունեցած նիստի քաղվածք: Պետք է նշել, որ այդ քաղվածքը նույնպես մինչև Ընկերությանը Պատվիրատուին գրավոր դիմելը նույնպես չի տրամադրվել:

Նշվածից ստացվում է հետևյալ պատկերը.

19.12.2018թ. վերադարձրել է հանձնման-ընդունման ակտը՝ «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ» թիվ 93 եզրակացությամբ, ըստ որի՝ ՀՀ մշակույթի նախարարությունը չի տվել իր համաձայնությունը ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերին: Սակայն ՀՀ մշակույթի նախարարության

Ընկերությանը ուղղված 24.01.2019թ. գրությանը կցվել է ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 20.12.2018թ. տեղի ունեցած նիստի քաղվածք, որի ժամանակ քննարկվել են «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ նախագիծը: Փաստորեն ստացվում է, որ նախագիծը վերադարձվել է Ընկերությանը 19.12.2018թ. եզրակացությամբ, սակայն նախագիծը այն քննարկվել է միայն 20.12.2018թ.:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն էինք ուզում հրավիրեինք նիստի մասնակից Հ. Սանամյանի (նախարարության աշխատակից) հարցադրմանը, մասնավորապես՝ «Առաջին փուլը եղել է՝ ուսումնասիրման աշխատանքների փուլ և շահել է մի կազմակերպություն, և երկրորդ փուլը՝ նախագծային աշխատանքներ, որը շահել է մի այլ կազմակերպություն: Առաջին փուլում կատարված հետազոտությունները՝ այդ թվում նաև մաքրման, պեղման աշխատանքների արդյունքները պետք է փոխանցվեին երկրորդ փուլին՝ նախագծային աշխատանքները կատարողներին, ինչը չի արվել՝ այդ փաստաթղթերը չեն փոխանցվել, իսկ նախագծողները ուսումնասիրել են նախկին՝ 1966-1976թթ. պեղումների աշխատանքները»:

Վերոնշված հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է այն հանգամանքը, որ ՀՀ մշակույթի նախարարության կողմից թույլ տված անգործության և աշխատանքների նկատմամբ ցուցաբերած մասնագիտական անփութության հետևանքով այսօր «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Լևանյանը և լիազորված ներկայացուցիչներ՝ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2019/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2019թ. թիվ 26-3/437-19 գրությունը, ՀՀ մշակույթի նախարարության 11.01.2018թ. թիվ 02/01.91/73-19

գրությունը և կից փաստաթղթերը, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 25.01.2019թ. և 01.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումները, ՀՀ մշակույթի նախարարության կողմից 01.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 31.05.2018թ. կնքված ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 19.10.2018թ. կնքված N 1 համաձայնագիրը, ՀՀ մշակույթի նախարարության կողմից 27.12.2018թ. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ուղղված գրությունը, «Հաբշին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 15.11.2018թ. տրված փորձաքննության եզրակացությունը.

ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 31.05.2018թ. կնքվել է ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ նաև աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:
- 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե կատարվել է պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա. չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով ահատույց փոխարինման

ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

• 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտել է աշխատանքի կատարման ժամկետը:

• 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարավոր է թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

• 3.3 կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և նույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հասդիսացած բացասական եզրակացությունը:

• 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է՝

- ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարում:

- Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 20 հոկտեմբեր 2018թ.:

- N1 աղյուսակով սահմանվել է վավերագրման ուսունասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները.

- N2 աղյուսակով սահմանվել է նախագծային և նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին ներկայացվող պահանջները:

«Հաբշին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 15.11.2018թ. տրված փորձաքննության եզրակացության համաձայն՝ փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 19.10.2018թ. կնքվել է N1 համաձայնագիրը, որի համաձայն՝ Պայմանագրով սահմանված՝ 20 հոկտեմբեր 2018թ. ժամկետը երկարաձգվել է մինչև 19 նոյեմբեր 2018թ.:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 01.10.2018թ. Պատվիրատուին է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման էսքիզային նախագծի փաստաթղթերը:

ՀՀ մշակույթի նախարարությունը 30.10.2018թ. թիվ 02/14.1/7748-18 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին հայտնել է, որ ներկայացված էսքիզային նախագծի փաստաթղթերի համաձայնեցումը երկարաձգվում է, քանի որ նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի կայացման օրը դեռ հայտնի չէ:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 15.11.2018թ. թիվ ՍՄ-18/34 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանը հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները.

1. Ելակետային տվյալներ 4 օրինակ,

2. Ճարտարապետաշինարարական մաս 4 օրինակ,

3. Նախահաշիվ 3 օրինակ,

4. Էլեկտրոնային 1 օրինակ,

5. Ակտ N1 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ 2 օրինակ,

6. Փորձաքննության եզրակացություն:

Խնդրում եմ Ձեզ ընդունել և տալ համապատասխան առաջարկություն:»:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 15.11.2018թ. Պատվիրատուին է ներկայացրել աշխատանների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը, իսկ Պատվիրատուն ներկայացված հանձնման-ընդունման վերաբերյալ 04.12.2018թ. N 68 եզրակացությամբ հայտնել է, որ գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերը թերի են և չեն ստացել ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2018 նոյեմբերի 21-ին ժամը 14:00-ին կայացած 9-րդ նիստի արձանագրությամբ կայացվել է որոշում առ այն, որ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման էսքիզային նախագիծը ենթակա է լրամշակման:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 14.12.2018թ. թիվ ՍՄ-18/50 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանը հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները/գիտամեթոդական խորհրդում արված առաջարկությունների հիման վրա.

1. Ճարտարապետաշինարարական մաս 4 օրինակ,

2. Ակտ N1 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ 2 օրինակ,

Խնդրում եմ Ձեզ ընդունել և տալ վճարման:»:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 14.12.2018թ. Պատվիրատուին է ներկայացրել աշխատանների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը, իսկ Պատվիրատուն ներկայացված հանձնման-ընդունման վերաբերյալ 19.12.2018թ. N 93 եզրակացությամբ հայտնել է, որ գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերը չեն ստացել գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

ՀՀ մշակույթի նախարարությունը 26.12.2018թ. գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերին լիազոր մարմինը չի տալիս իր համապատասխանությունը հետևյալ հիմքով.

Նախագծային առաջադրանքում՝

1. սխալ է լրացված 11 կետը,

2. 14 կետը լրացված չէ, սակայն հեղինակները հնարավորություն են ունեցել օգտվելու մատենագրությունից և նախկինում կատարված չափագրական նյութերից՝ որպես այլ նյութեր,

3. լրացված չէ նախատեսվող աշխատանքների նպատակը բնույթը.

Աշխատանքային նախագծում՝

4. հիմնավորված չէ հարավային ճակատի արցունքաթափի թեքադիր լինելը՝ բաղնիքների պատերի վերամասերն սովորաբար ունենում են հորիզոնական ավարտ: Չափագրությունում հարավային ճակատի պայմանական նշաններով տրված են խոնավության հետևանքով առավել քայքայված հատվածներ. Սակայն վերակագնման մասում պայմանական նշաններով նույն հատվածները նշված են որպես բավարար վիճակում գտնվող որմնաշավածք՝ անհրաժեշտ է առաջարկել պատերի վերնամասերի քայքայված հատվածների քանդում-վերաշարում, իսկ պատերի գլուխներում՝ կրավազային շաղավղով և անկանոն կտրվածքով բազալտասերով ջրամեկուսիչ շերտ,

5. արևելյան ճակատի առաջարկված է աջակողմյան անկյան բցակայող շարվածքի վերականգնում, սակայն հարավային ճակատում նույն անկյունը նշված է որպես բավարար վիճակում գտնվող որմնաշարվածք,

6. արևելյան ճակատի արցունքաթափը տրված է 2.4 նիշի վրա, սակայն հարավային ճակատի նույն անկյան նիշը տրված է՝ 2.52:

7. կտրվածք 2-2-ի փոխարեն անհրաժեշտ է գրել 2՝-2՝ համաձայն հատակագծի կտրվածքների նշահարման: Վերականգնված մասի կտրվածքում պատուհանից աջ ընկած հատվածում վերականգնված է և սվաղի տակ չառվծա պաշարը, ինչը բացակայում է պատուհանից ձախ ընկած պատաշարվածքում: Նույնը վերաբերում է նաև 1՝-1՝ կտրվածքին:

8. կտրվածք 5-5-ում չափագրության մեջ կետրոնական պատն ընկնում է կտրող հարթության մեջ, սակայն գրաֆիկորեն ցույց է տրված որպես քանդված հատված:

9. նախագծային առաջարկում անդրադարձ չկա հատակներին, կրավազային բարդ շաղախի բաղադրությանը և նյութերի հարաբերությանը,

10. Բացակայում է շինհրապարակի կազմակերպման հատակագիծը և աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը:

Ներկայացնում ենք ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդում քննարկված հուշարձանի էսքիզային նախագծի վերաբերյալ քաղվածքը:»:

ՀՀ մշակույթի նախարարությունը 27.12.2018թ. թիվ 02/01.91/9352-18 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 31.05.2018թ. կնքված N ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեին պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 19.10.2018թ. կնքված N 1 համաձայնագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել էր և սահմանվել 19.11.2018թ.:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 և 2.1.3 կետերի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 25.12.2018թ. միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 14.000 (տասնչորս հազար) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրի 5.2 կետի համաձայն (պայմանագրի 4.1 կետում նախատեսված պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսը):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 30.05.2018թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը):»:

ՀՀ մշակույթի նախարարությունը ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 28.12.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Պայմանագրի համաձայն էսքիզային աշխատանքները պետք է համաձայնեցվեին ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի հետ և ստանային գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, որի հիման վրա պետք է կատարվեին գիտանախագծային փաստաթղթերի կազմումը: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ էսքիզը «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացվել է 01.10.2018թ., սակայն մոտ մեկ ամիս գիտամեթոդական խորհրդի նիստի արդյունքների մասին տեղեկություն չի եղել, և Ընկերությունը առաջարկել է Պայմանագրի վերջնաժամկետը (20.10.2018թ.) երկարաձգել մինչև 19.11.2018թ.: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստը տեղի է ունեցել 21.11.2018թ. Պայմանագրի վերջնաժամկետից երկու օր անց: Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ գիտամեթոդական խորհրդի նիստի արձանագրությունը և քաղվածքը չի ներկայացվել և Ընկերությունը տեսնելով, որ էսքիզի վերաբերյալ որևէ պատասխան չկա ներկայացված էսքիզի հիման վրա

ներկայացրել է մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ 21.11.2018թ. armeps համակարգի միջոցով Պատվիրատուին է տրամադրել իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունները, որը սակայն Պատվիրատուի կողմից չեն ընդունվել և հետ են վերադարձվել առանց բացասական եզրակացության: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Պայմանագրի 3.3 կետով սահմանված պահանջը:

Պատվիրատուի ներկայացուցիչը Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 01.10.2018թ. ներկայացվել է նախագծի էսքիզային փաստաթղթերը, որի համաձայնեցումը երկարաձգվել է, քանի որ նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստի կայացման օրը հայտնի չի եղել, ինչից հետո 19.10.2018թ. կնքված համաձայնագրով պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգել 30 օրով: Այնուհետև Ընկերության կողմից 15.11.2018թ. ներկայացվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքը և աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, որը քննարկվել է 21.11.2018թ. կայացած գիտամեթոդական խորհրդի նիստում և որոշվել է նախագիծը տալ լրամշակելու: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ 15.11.2018թ. Ընկերության կողմից armeps համակարգի միջոցով ներկայացվել է իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, որը սակայն չի ընդունվել Պատվիրատուի կողմից, քանի որ գիտանախագծային փաստաթղթերը չեն ստացել գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը: «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 14.12.2018թ. ներկայացրել է լրամշակված գիտանախագծային փաստաթղթերը և աշխատանքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, որը Պատվիրատուի կողմից կրկին չի ընդունվել և մերժվել է ներկայացված աշխատանքի թերի լինելու պատճառով: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց, որ Ընկերության նկատմամբ երբևէ չի կիրառվել աշխատանքի կատարման ժամկետը խախտելու վերաբերյալ որևէ տույժի միջոց, Պայմանագիրը միակողմանի լուծելու պահանջը չի վերաբերվել կատարողի կողմից ժամկետի ուշացմանը, պահանջը կապված է կատարողի կողմից աշխատանքների ոչ պատշաճ կատարման խնդրի հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 31.05.2018թ. կնքվել է ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագիր:
- ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմավել է ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարում:
- Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 20 հոկտեմբեր 2018թ.:

- ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 19.10.2018թ. կնքվել է N1 համաձայնագիրը, որի համաձայն՝ Պայմանագրով սահմանված ժամկետը երկարաձգվել է մինչև 19.11.2018թ.:
- «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողից 01.10.2018թ. Պատվիրատուին է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերանորոգման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման էսքիզային նախագիծը:
- ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 21.12018թ. կայացած 9-րդ նիստի ժամանակ կայացվել է որոշում առ այն, որ ներկայացված էսքիզային նախագիծը ենթակա է լրամշակման:
- «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 15.11.2018թ. և 14.12.2018թ. ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունները չեն ընդունվել Պատվիրատուի կողմից՝ աշխատանքի թերի լինելու պատճառով:
- ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի կողմից բացասական եզրակացություն չի տրվել:
- ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի կողմից առաջարկվել է լրամշակել էսքիզային նախագիծը՝ հաշվի առնելով նշված դիտողությունները և առաջարկությունները:
- ՀՀ մշակույթի նախարարությունը 25.12.2018թ. միակողմանի լուծել է ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1 ծածկագրով գնման պայմանագիրը և Պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը հրապարակել է www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ ՀՀ մշակույթի նախարարության կողմից Պայմանագրի միակողմանի լուծումը իրավաչափ չէ, քանի որ գիտամեթոդական խորհրդի նիստը տեղի է ունեցել Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո, ավելին առկա չէ նաև գիտամեթոդական խորհրդի կողմից որևէ բացասական եզրակացություն, փոխարենը առկա է գիտամեթոդական խորհրդի որոշումը, որով առաջարկվել է լրամշակել էսքիզային նախագիծը՝ հաշվի առնելով նշված դիտողությունները և առաջարկությունները:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ գիտամեթոդական խորհրդի նիստը Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո հրավիրելու արդյունքում Ընկերությունը զրկվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքները Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան իրականացնելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հետ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2019թ. թիվ 26-3/437-19 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ